ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 217 Ա

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ (ԳԵՐԱՎՃԱՐ) ՀԱՇՎԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Ա. Նիկողոսյանի դիմումը

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Ե Մ***

1.Քաղաքացի Արման Բաբիկի Նիկողոսյանի կողմից Եղեգիս համայնքի բյուջե վճարված 14216 (տասնչորս հազար երկու հարյուր տասնվեց) ՀՀ դրամ գումարի չափով գերավճարի հաշվին իրականացնել հաշվանցում (14216 ՀՀ դրամ գերավճարը առաջացել է TOYOTA CAMRY 2.5 մակնիշի 36TZ978 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը 14/08/2025թ. օտարելու արդյունքում):

2.Հանձնարարել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել գումարի հաշվանցումը հարկ վճարողին պատկանող MERCEDES-BENZ C 300 4MATIC մակնիշի 22MB112 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցի հարկային պարտավորությունների մարմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հոկտեմբերի 14 գ.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ու Մ
16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 218 Ա
### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջները

***Ո Ր Ո Շ Ու Մ  Ե Մ***

Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 125 հա արոտավայրերի հողատեսքը մեկ տարի ժամկետով տրամադրել վարձակալության Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի բնակիչ Արմեն Ավետիկի Հարությունյանին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **<u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>**

2025 թ. հոկտեմբերի 16 ի.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ու Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 219 Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԱԼԲԵՐՏ ԼԻՊԱՐԻՏԻ ՁՈՀՐԱԲՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները

***Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ***

1.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Ալբերտ Լիպարիտի Ձոհրաբյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ հանգուցյալ Ծաղիկ Խաչատուր Կիրակոսյանի (մայրը), Եֆրոնյա Խիկարի Ձոհրաբյանի (կինը), Գագիկ Ալբերտի Ձոհրաբյանի (որդին) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0012-0001, մակերեսը՝ 0,274 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 3-րդ փողոց, 5-րդ փակուղի, տուն 2 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Ալբերտ Լիպարիտի Ձոհրաբյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ հանգուցյալ Ծաղիկ Խաչատուր Կիրակոսյանի (մայրը), Եֆրոնյա Խիկարի Ձոհրաբյանի (կինը), Գագիկ Ալբերտի Ձոհրաբյանի (որդին) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-024-0044-0016, մակերեսը՝ 0,0998 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ, 12-րդ փողոց, թիվ 25 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. հոկտեմբերի 17 ք.Եղեգիս

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 220 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ԷԴՎԱՐԴԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքը

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ***

Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Կարեն Էդվարդի Մարգարյանի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատեսքին (0,139հա մակերեսով, 10-021-0114-0013 կադաստրային ծածկագրով) տրամադրել Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ, Կենտրոնական փողոց թիվ 28 հասցեն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ** **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2025 թ. հոկտեմբերի 17 հ.Եղեգիս

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 221 Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ԼԱԶՐ ԲԱՂԴԱՍԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտերի քաղվածքները

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ*

1.Եղեգիս համայնքի Շատին գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Լազր Բաղդասարի Սարգսյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ հանգուցյալ Թամամ Մաթևոս Պողոսյանի (կինը), Սպարտակ Լազրի Սարգսյանի (որդին), Գայանե Լազրի Սարգսյանի (աղջիկը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին և բնակելի տանը (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0039-0011, մակերեսը՝ 0,103 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 5-րդ փողոց, տուն 4 հասցեն:

2.Եղեգիս համայնքի Շատին գյուղի նախկին բնակիչ, հանգուցյալ Լազր Բաղդասարի Սարգսյանի (ընտանիքի գլխավորը) և նրա ընտանիքի անդամներ՝ հանգուցյալ Թամամ Մաթևոս Պողոսյանի (կինը), Սպարտակ Լազրի Սարգսյանի (որդին), Գայանե Լազրի Սարգսյանի (աղջիկը) սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0012-0015, մակերեսը՝ 0,199 հա) տրամադրել Եղեգիս համայնք, Շատին գյուղ, 27-րդ փողոց, թիվ 2/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2025 թ. հոկտեմբերի 17 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, yeghegis.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025 թվականի N 222 Ա
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15-Ը ՄԱՐՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 48Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ը ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 23-ը հունիսի 2023 թվականի թիվ 87Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 23-ը հոկտեմբերի 2025 թվականի N 01/08.2/6473-2025 գրությունը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

Եղեգիս համայնքի ղեկավարի 15-ը մարտի 2018թ. «Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների նոր կազմը, հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու, հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկման համար լիազորված անձ նշանակելու մասին» թիվ 48 Ա որոշման հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝** **<u>ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ</u>**
2025 թ. հոկտեմբերի 22 ք.Եղեգիս

Հավելված

Եղեգիս համայնքի ղեկավարի

23-ը հոկտեմբերի 2025թ. N 222 Ա որոշման

Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը սույն թվականի հոկտեմբերի 31-ին հայտարարված մրցույթի համար՝

| Հ/Հ | Անուն, Ազգանուն,Հայրանուն | Պաշտոնը | Պաշտոնը հանձնաժողովի կազմում |
|---|---|---|---|
| 1 | Աիարոն Յուրիկի Գաբրիելյան | համայնքի ղեկավարի առաջին տեղակալ | հանձնաժողովի նախագահ |
| 2 | Հասմիկ Սամվելի Ավետիսյան | ՏԿ և ՏԻ հարցերի վարչության գլխավոր մասնագետ | հանձնաժողովի անդամ |
| 3 | Աշոտ Թադևոսի Մինասյան | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ | հանձնաժողովի անդամ |
| 4 | Ռուզաննա Արարատի Հախվերդյան | Ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ | հանձնաժողովի անդամ |
| 5 | Հրաչյա Ջիվանի Պողոսյան | Եղեգիս համայնքի ավագանու անդամ | հանձնաժողովի անդամ |
| 6 | Զոյա Հայրիկի Մարտիրոսյան | Եղեգիս համայնքի ավագանու անդամ | հանձնաժողովի անդամ |
| 7 | Նարեկ Արզումանի Մարտիրոսյան | Եղեգիս համայնքի ավագանու անդամ | հանձնաժողովի անդամ |
| 8 | Արտուշ Աշոտի Հակոբյան | Եղեգիս համայնքի ավագանու անդամ | հանձնաժողովի անդամ |
| 9 | Արգիշտի Սահակի Նազարյան | Եղեգիս համայնքի ավագանու անդամ | հանձնաժողովի անդամ |

Եղեգիս համայնքի ղեկավարի տեղակալ Աիարոն Գաբրիելյան